

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ


1.4.1.Ջրաղվածություն

2003թ. հունվար-օգոստոսին, ըստ գնահատման, տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը¹ հանրապետությունում կազմել է 1404.1 հազ. մարդ, որի 91.0%-ը կամ 1277.4 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 9.0%-ը կամ 126.7 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2003թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալությունում հաշվառման կանգնած 152.8 հազ. աշխատանք փնտրողներից 98.9%-ը կամ 151.1 հազարը եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 81.5%-ը կամ 123.2 հազ. մարդ:

2003թ. օգոստոսին վերոհիշյալ գործակալության կողմից հաշվառման վերցված 1.4 հազ. չզբաղվածներից 0.9 հազարը կամ 64.3%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից հանվել են 3.1 հազ. մարդ, նրանցից 24.7%-ը՝ աշխատանքի տեղավորման պատճառով:

Պաշտոնապես գրանցված գործազուրկների շարժն ըստ ամիսների 2002-2003թթ.²



¹ Ցուցանիշի հաշվարկման հիմքում դեռևս դրված չեն ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացված տվյալները, քանի որ տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի ցուցանիշի մշակումն ավարտված չէ:
² ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի¹, 2003թ. օգոստոսին

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		նրանցից՝ չգրադվածներ		նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2002թ. օգոստոսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2002թ. օգոստոսի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2002թ. օգոստոսի նկատմամբ, %
ք.երևան	35.6	90.4	35.3	90.1	31.7	87.8
Արագածոտն	2.3	104.5	2.1	105.0	1.5	100.0
Արարատ	5.7	82.6	5.5	80.9	4.3	79.6
Արմավիր	8.4	98.8	8.4	98.8	5.6	91.8
Գեղարքունիք	8.7	100.0	8.6	98.9	6.3	98.4
Լոռի	26.9	105.1	26.7	105.1	21.8	101.9
Կոտայք	8.5	87.6	8.4	86.6	6.2	83.8
Շիրակ	32.4	95.9	32.3	96.1	26.8	92.7
Սյունիք	16.9	103.0	16.8	103.1	13.9	101.5
Վայոց ձոր	2.1	100.0	2.1	105.0	1.6	100.0
Տավուշ	5.3	115.2	4.9	108.9	3.5	89.7
Ընդամենը ՀՀ	152.8	96.8	151.1	96.4	123.2	93.1

Կանայք կազմել են պաշտոնապես գրանցված գործազուրկների 68.2%-ը: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2002թ. օգոստոսի նկատմամբ աճել է 1.6%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2003թ. օգոստոսի վերջին կազմել է 723 մարդ, այդ թվում՝ 76.8%-ը կան 541-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ: Մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 209 չգրադված մարդ՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 10%-ով:

2003թ. օգոստոսի վերջի դրությամբ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության միջնորդությամբ աշխատանքի տեղավորվել են 775 մարդ, որոնց 50.6%-ը՝ կանայք:

Հանրապետությունում նպաստառու գործազուրկների թվաքանակը 2003թ. օգոստոսին կազմել է 7.1 հազ. մարդ, իսկ գործազրկության նպաստի միջին չափը՝ 3230 դրամ: Նույն ամսում դրամական օգնություն ստացել են 13.1 հազ. գործազուրկ: Դրամական օգնության միջին չափը կազմել է 1442 դրամ:

Գործազրկության մակարդակը, հաշվարկած որպես զբաղվածության տարածքային կենտրոններում պաշտոնապես գրանցված գործազուրկների և տնտեսապես ակտիվ բնակչության (զբաղվածներ և գործազուրկներ) հարաբերակցություն, 2003թ. օգոստոսին կազմել է 8.8% և 2002թ. օգոստոսի համեմատությամբ նվազել է 0.6 տոկոսային կետով, իսկ 2003թ. հուլիսի նկատմամբ նվազել է 0.1 տոկոսային կետով:

¹ ՀՀ սոցիալական ապահովության նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: